<< 13>> 02 2024թ. Քաղաք Մասիս ՀՀ ՆԳՆ Ոստիկանության Մասիսի բաժին
/վայրը/ /ստորաբաժանման անվանումը/

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ __10_____
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանության Մասիսի բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Ա.Դավթյանս քննելով <<29>> 01 2024թ. Թիվ 10 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը.

Պարզեցի, որ Գեղարքունիքի մարզի Վարդենիս բնակավայրի Ա.Սեսմանուկյան փ. 13շ. 32 բն. բնակիչ Վահագն Գագիկի Հակոբյանը /ծնվ.12.05.1982թ./ 29.01.2024թ-ին ժամը 15:00-ի սահմաններում գտնվել է Մասիս քաղաքի 4-րդ փողոցի կենտրոնական խաչմերուկի մոտ գտնվող հասարակական տրանսպորտի կանգառի ծածկի տակ օգտագործելով ծխախոտ, որով խախտել է 2020թ-ի փետրվարի 13-ի ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 7-րդ կետի պահանջները և կատարել է ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 173.2-րդ հոդվածով նախատեսված արարք,այն է օրենքով սահմանված ծխախոտային արտադրատեսակի կամ ծխախոտային արտադրատեսակի փոխարինիչների օգտագործման կամ օգտագործման սահմանափակման արգելքը խախտելը:

Ղեկավարվելով ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 224-րդ հոդվածով

ՈՐՈՇԵՑԻ

Վահագն Գագիկի Հակոբյանին
/իրավախախտում կատարած անձի անունը,հայրանունը.ազգանունը/

Տուգանել 50.000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ՝ գումարով վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 173.2 հոդվածի համաձայն :

Ինձ բացատրվել է վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 288 հոդվածով սահմանված որոշման զանգատարկման կարգը,որի համար ստորագրում եմ

_____ _____
/ ստորագրությունը/

Ստացա որոշման մեկ օրինակը _____2024թ. _____

Ոստ.Մասիսի բաժնի պետ _____ Ա.Դավթյան